

## ՄԱՆԿԱՎԱՐԺԵԿԱՆ

Սլեպնոյի ազդեցութիւնը մանկան եւ աշակերտի հոգեկան եւ ժիղխական կարողութեանց վերայ.

Սոսկափ է այն հիւանդութիւնը կամ ախտք, որի սաղմերը մարդկային օրգանիզմի մէջ մուտք գործելուց յիսոյ՝ սկսում են իրենց աճեցման բնթացքում աստիճանաբար քայլայել և հիւծել ոչ թէ միայն մի անհատի ֆիզիքական և մտաւոր ոյժերն, այլ և նոյն կործանաւորար պրոցեսին ենթարկում այդ անհատից սերւած ամրող սերունդը, որից յիսազայում առաջ են դալիս հասարակութեան համար իրենց գոյութիւնը քարչ տւող բարոյապէս ֆիզիքապէս և մտաւորապէս խեղաթիւրւած անդամներ:

Այսպիսի մի սոսկալի ախտէ նաև ալկահոլը, որից աւելի շատ մարդ է վշանում—ասում է պրոֆեսոր Սիկորսկին—քան սպանիչի ձևոքից, թոյնից, ցրտից և երկնային կայծակից:

Անյիշելի ժամանակներից մարդկութիւնը կորի է մղել ալկահոլի զէմ և մինչև այժմ էլ աւելի մեծ չափերով, սկայան, չնայած այս հանդամանքին՝ ալկահոլի գործածութիւնը գնալով աւելի տարածւում է և մինչև իսկ այդ թոյնից զերծ չի մնում մանուկ սերունդը: Զինառատանում ք. ա. 2286 թ., մի էդիկտ հրատարակուեց, որով մահւան պատիժ սպանալով արգելում էր սպիրտային կամ ողելից խմիչքների անշափառոր գործածումն նոյն երկում 2205 թ. թ. ա. բոլոր օղեզգործներին Զինաստանից դուրս քչեցին: Սրանց օրինակին հետեւցին նաև նապոնացիք, որոնք մինչև իսկ օղեվաճառներին աքսորեցին իրենց երկրից: Հնումն Հռովմայեցիների մէջ ողելից խմիչների վաճառումն արգելուած էր. այստեղ ևս հարբեցողին մահւան պատիժ էին տալիս. այս օրէնքը կիրառում էր յատկապէս կանանց վերաբերեալ, որոնց թոյլ օրգանիզմի վերայ ալկահոլը աւելի շուտ էր ներգործում. Հռովմայեցին իրաւունք ունէր մինչև իսկ սպաննելու իւր կնոջը, ևթէ նրան հարբած դրութեան մէջ դանէր: Սպառայում, ուր ամեն տեսակ մարմնամարզական խաղերով և ֆիզիքական տանջանքներ տալով աշխատում էին նոր սերունդը վարժեցնել դիմանալու կեանքի և պատերազմների բոլոր արհաւիրքներին պատժելու մի առանձին միջոց էր նաև առանց ջրի խառնուրդի դիմայնելը:

Եթէ հնագոյն ժամանակներում դեռ ևս այդպիսի կորի էր

մզւում ալկահոլի դէմ, ներկայումս ի հարկէ աւելի ևս կոփւը մեծ չափեր պէտք է ընդունի, քանի որ 20-րդ գարօ իւր բազմաթիւ յայտնազործութիւնների հետ աշքաթող չի արել այն հանդամանքն են, թէ ինչ ներդործութիւն ունի ալկահոլը մարդու հոգեկան և ֆիզիքական կարողութիւնների վրայ և զիտական հետազօտութիւններով պարզել է, աւելի շօշափելի է զարձրել այն, ինչ որ զուցէ հին մարդուն յայտնի չէր:

Մեզանից շատերն ականատես են եզել այն տխուր երեսը ին, ինչպէս յաճախ մէկ կամ  $1\frac{1}{2}$  տարեկան երեխայի շրթունքին ծնողները առանձին հաճոյքով մօտեցնում են զինով բաժակը, և երեխան, որ առաջին անգամ համն առնելով տհաճութեամբ ճրպ-պացնում է շրթունքները և դէմքը թթւացնելով յետ է մզում բաժակը, սակայն հետդիետէ գործածելով, ոչ թէ միայն չի զգում, այլ նոյն իսկ զինու բաժակը տհանելիս՝ վրայ պրծնում և ագահարար ծծում, մինչեւ իսկ ջրի բաժակն անգամ տեսնելիս զինի է կարծում և լաց է լինում ու պահանջում: Փաստ է և այն, որ այդպիսի երեխաներին ծնողներն հարքեցնում են և զիտում, թէ ինչ շարժումներ է անում նա ու այդպէս զւարճանում:—Ես ոճրազործութիւն եմ համարում—ասում է պրոֆ. Ցիհենը—երեխային ամենաչնչին չափով ալկահոլ տալը

Ալկահոլը զիխաւորապէս թիւնաւորում է ներւային սիստեմը: Ազդում է զիխի ուզեղի քնքուշ ցանցերի վերայ և ապա բթացնում մարդու մաւառը ընդունակութիւնները: Մանկավարժութեան մէջ—ասումէ պրոֆ. Մոյմանը—վազուց յայտնի է, որ երեխային ճիշտ հասկանալ կարող ենք միայն այն ժամանակ, երբ մենք նրա վերայ նայենք ինչպէս զարգացման պրոցեսի առաջին աստիճանի (ֆիզիոլոգիական և ինտելեկտուալ տեսակէտից) գնուող էակի վերայ, որի հետ անհրաժեշտ և կարեոր է—պրակտիկ դաստիարակութեան ընթացքում վերաբերեն շատ զգոյշ: Քանի որ անատոմիական և ֆիզիոլոգիական շատ առանձնայատուկ տարբերութիւններ կան հասակաւորի, և երեխայի օրգանիզմի մէջ—արեան շրջանառութեան, ձայնի, ոսկրների, ուզեղի, նեարդերի, մկանների և այլն:

Որպէս զի տարբերութիւնը աւելի ակնյայտնի լինի պրոֆ. Մոյմանը առաջ է բերում երեխայի զանգի և դէմքի մէջ եզած աստիճանական տարբերութիւնը յարաբերութեան ձևով նոր ծնուած երեխայի դանգի մեծութիւնը յարաբերում է իւր դէմքի մեծութեան ինչպէս  $18:1$

5 տարեկ.  $15:1$

10 տարեկ.  $13:1$

Այսպէս աեսնում ենք զանգի և դէմքի մեծութեան յարաբերութիւնները չարունակ փոխում է, իսկ հասակաւորին  $2\frac{1}{2}:1$ -ին

և մնում է անփոխօխու Միւս կողմից երեխայի ուղեղի աճեցման պրոցեսն աւելի ակնյայանի է, երեք տարեկան երեխայի ուղեղը  $\frac{1}{3}$  անգամ միայն փոքր է հասակաւորի ուղեղից: Նորմալ վիճակում երեխայի ուղեղի ծանրութեան յաւելումն շատ մեծ չափով է կատարւում, 2—7 և 7—14 հասակում, երբ արդէն նրա ուղեղի ծանրութիւնը կազմում է իւր մարմնի ծանրութեան  $\frac{1}{30}$ -կան մասը, մինչ դեռ հասակաւորինը  $\frac{1}{46}$ , ամենից արագ աճում է փոքր ուղեղը, իսկ ամենից ուշը ճակաաի ուղեղը, որը մտոծողութեանց ֆունկցիաների կենարունն է:

Յայտնի է, որ նոր ծնուած երեխայի գանդի մասերը իրար հետ միացած են լինում սկզբում կաշուէ թելիկներով, և միայն շատ ուշ այդ թելիկները կրծկանում են և երբ ուղեղն արդէն բուրովին կազմակերպում է, ահա այն ժամանակ այդ կարերը վերջնականապէս ոսկրանում են: Հասկանալի է, որ ուղեղի այսպիսի արագ աճեցման և էներգիական զործունէութեան համար պահանջւում է աւելի մեծ չափով աննդարար մատերիալ և այդ է պատճառը, որ մանկան և պատանու ուղեղը մնուցանող արիւնատար անօթները հասեմատարար աւելի լայն են, և նիւթերի փոխանակուելը ներւային սիստեմի այդ կենարունում ինտենսիւ է:

Ուրիմն և ալկանուր աւելի լայն ճանապարհ է գանում արիւնատար անօթների միջով անցնելու ուղեղի ցանցին: Արեան մնձ հոսանքը այդ թունը ասրածում է ներւային սիստեմի մէջ և թափանցում բարոր գանդակիկների մէջ: Մի հանգամանք ես, որ մանկան օրգանիզմի մէջ արիւնը աւելի քիչ է, քան հասակաւորին և աշկանովի այն զողան (փոքրիկ չափը) աւելի քիչ հեղուկի հետ խառնուելով, նրա կործանարար ոյժը աւելի զգալի է:

Պրոֆեսոր Գոզը ցոյց է տւել, որ ալկանուր կանգնեցնում է ուղեղի աճեցման պրոցեսը. դադարեցնում է վանդակիկների զարգացումն, խեղաթիւրում է թելիկների ձեերը և խանգարում նոցարնական բեզմնաւորման: Պրոֆեսոր Սիկորսկու «Փիզիոգոնոմիկա» և Փիզ. սօս. պայմանը» փոքրիկ բրոցիւրի մէջ առաջ են բերւած պրոֆ. Կրեոլինի և նրա աշակերաների արած մի քանի հետաքրքիր փորձերը, որ աւելի առացոյց է մեր վերոյիշեալ ասածին, և որտեղ կտեսնենք ալկանովի ազդեցութիւնը հոգեկան ընդունակութեան վրայ Փորձը հետեւան էր.

—Կիբէնտին ընդունել էին տւել 30—45 զրամ մաքուր ալկանուր, որ անում է մօտ  $1-1\frac{1}{2}$  օդու բաժակ մաքուր օդի: Առաջին անգամ մոտորական շարժումներն աւելի արագ սկսեց կատարուել: Յետոյ պարզեց, որ հոգեկան ըմբռնման պարզ ակտերն աւելի քիչ են տուժում, քան մտաւոր ասոցիացիայի աւելի քարդ պրոցեսները: Վերջին ընդունակութիւնը տուժում է երկու ուղղութեամբ, ա-ին, որ

գանդազում և թուլանում է ասիցիացիայի առաջ գալը և երկրորդ որ նոցա որակն էլ էապէս փոխում է. առարկայի իսկական էռութեան կամ այսպէս ասած – առարկայացման վրայ հիմնուած ներքին ասոցիացիաների փոխարէն, առաջ են դալիս աւելի արտաքին ստերեոտիպ ասոցիացիաներ, հիմնուած առարկաների արտաքին պատահական նմանութեանց վերայ:

Այդ երկու ասոցիացիաների կազմութեան ձեր մէջ մեծ տարրերութիւն կայ. առաջին անգամ շրջապատող երեսութների և օրեւկուների ճիշտ ճանաչողութեան աւելի բարդ իմացութիւններ են առաջ դալիս, իոկ երկրորդ գէտքում, իմացութեան մէջ առաջ է գալիս չփոթութիւն և խեղաթիւրումն մտքի ուղիղ ընթացքի. ճանաչողութիւնը հիմնուելով առարկաների պատահական նմանութեանց վերայ, որոշակի ուղղութիւն չի ստանում. Ալկոհոլի ազդեցութեան տակ արտաքին ասոցիացիաները մի շարք հիւանդաղին իդէաներ են առաջացնում, որոնք հարբեցողի զիսում յամառութեամբ շարունակում են միալ ու տեղի անտեղի նոր նոր զագիաներ առաջացնել: Կրեպիլինի կիէնար ալկանոլ ընդունելուց յետոյ նշան տալուն պէս պէտք է պատասխանէր պայմանաւորւած շարժումներին, երեաց, որ ալկանոլի ազդեցութեան տակ անսովութեան տպաւորութեան և շարժման պատասխանի մէջ անցած ժամանակաշրջանը 0, 19 վարկեանից բարձրացաւ 0, 297-ի, պարզւեց որ ուղիղի ուշադրութեան և յիշողութեան ֆունկցիան բթանում է, ուստի և անկարող է լինում շարժողութեան նեարդին ժամանակին հասցնել էական պայմանը:

Մորիցկենդէ գերմանացի մի բժիշկ Կրեպիլինի և նրա լաբարատորիայում այսպիսի յաճախակի փորձեր կատարող գոքառը Սմիտի տւած եզրակացութիւններին աւելի հաւասարիանալու համար հաւաքեց 6—15 տարեկան 25 առողջ և բոլորովին նորմալ աշակերտներ, որոնց նա մի քանի առաւօտ պարբերաբար ընդունել տեսց 1½—2 բաժակ (բիւմկա) օդի, համաձայն իրենց տարիքի. ապա դասի ընթացքում դիտում էր թողած հետեւանքը: Եթեխանները ալկանոլը ընդունելուց յետոյ իոկոյն աշխուժանում էին, նրանց մոտարական շարժումները աւելի արագ էր կատարւում: Իրենց պահում էին համարձակ և դասերին էլ ազատ գկում, առանց ձնչուելու: Կարգում էին արագ, առողանութեամբ, մինչև իսկ հեշտութեամբ խնդիրները վճռում և աւելի կայտառ խօսակցութիւն սկսում: Սակայն այդ բոլորի հետ զրութեան մէջ նոքա սխալւում էին ու ծուռ մուռ զրում: Բարդ խնդիրների մէջ անում էին շատ կապիտ սխալներ, և սաքով անգամ չէր անցնում. ուղղելու, անգիրը շատ մեծ դժւարութեամբ էին սովորում, առողանութեամբ կարդացածն էլ չէին ըմբռնում և կարդացածի բովանդակութիւնը պատմել չէին

կարողանում: Առօրեայ կեանքում էլ մենք յաճախ տեսնում ենք, որ ալկահոլը հարբածների վերայ ազգում է տարբեր չափերով. մէկը շատ խմելուց լաց է լինում և յիշում է իւր մեռած պապերին ու հօրը, միւսը անմտօրէն ծիծաղում է, երրորդը շատախօսում կամ չարանում ե այլն, իսկ այդպիսի երեսյթներն արդէն ապացոյց են ուղեղի նեարդերի որոշ ֆունկցիաների գանդաղելուն, իսկ զգայութեան և շարժողութեան նեարդերի աւելի զրգուման:

Աշակերտութեան յառաջադիմութեան վերայ ալկահոլի թողած ազդեցութիւնը պարզեց Վեննայի ժողովրդական գալրոցների տեսառչ Բերը, որը իւր զիտողութիւններն արել էր 581 աշակերտի վրայ հասնելով հետեւեալ եզրակացութեան.

137 աշակերտից (22, 7 <sup>0</sup> 0),	լաւ	բաւար.	անբաւ.
որ բոլորովին ալկահոլ չեն գործածել, ցոյց են տւել հե- տեեալ յառաջադիմութիւնը	56=41,8 <sup>0</sup> /0	66=49,2 <sup>0</sup> /0	12=9 <sup>0</sup> /0

164 պատահական խմող			
աշակերտներից (27, 7 <sup>0</sup> 0)	56=34,1 <sup>0</sup> /0	93=56,6 <sup>0</sup> /0	15=9,1 <sup>0</sup> /0

219 աշակերտներից (37, 3 <sup>0</sup> 0),			
որոնք օրը մի անգամ գարե- ջուր էին գործ ածում .	61=27,8 <sup>0</sup> /0	128=58,4 <sup>0</sup> /0	30=13,7 <sup>0</sup> /0

71 աշակերտներից (120 <sup>0</sup> 0),			
որոնք օրը երեք անգամ գա- րեջուր էին ստանում .	17=24,9 <sup>0</sup> /0	41=57,7 <sup>0</sup> /0	13=18,3 <sup>0</sup> /0

3 (0, 5 <sup>0</sup> 0) աշակերտից,			
որոնք օրը երեք անգամ գա- րեջուր էին ստանում .	—	1=33,3 <sup>0</sup> /0	2=66,6 <sup>0</sup> /0

Պէտք է յիշել նաև այն, երբ մանկան ուղեղի աճեցման պրո-  
ցեսը խանգարող երեյթները աւելի յաճախ կրկնող կամ տեղական  
են լինում, վաղաժամ հասունանումն և ուկրանում մանկան գանգի  
մասերը միացնող կարերը, որով և կանգ է առնում ուղեղի զար-  
գացումն, որից առաջ են գալիս միկրոցեֆալներ—փոքրագլուխներ,  
որոնք իրենց մտաւոր ընդունակութիւններով շատ աւելի ցած են  
կենդանիներից անգամ: Ալկահոլը մանկան և պատանու համար ու-  
րիշ կողմից ևս չարիքի մի մեծ ազբիւր է: Սեռական ցանկութեանց  
աւելի նորմալ շրջանը սկսում է 7—8 երեմն և մի քիչ աւելի ուշ  
տարիքի մէջ: Բայց եղել են դէպքեր—նկարազել է Սանդորտ Բել  
—որ սեռական ցանկութիւնները արտայայտել են 2—3 տարեկան  
երեխաների մէջ, որը ի հարկէ միանգամայն անհորմալ սնուցման  
և գոգոխ նիւթերսվ կերակրելու հետեւանք է (ալկահոլ, չոկալատ

կանգնետ, սուրջ, թէյ և այլն): Պատամնելական հասակում սեռական ցանկութիւնների հետ միասին ալկահոլը միաժամանակ թուլացնում է զիմադրող կանքը և ընդհակառակը աւելի գոգոսում սեռական փունկցիաները: Պրոֆեսոր Տարնովսկին իւր բազմամետյ փորձերի հիման վերայ հաստատում է, որ առնական ցանկութիւնը պատանիները մեծ մասամբ կորցնում են ալկահոլի ազդեցութեան տակ: Էմիլինգհառուզը, որը աւելի մեծ ուշադրութեամբ հետեւ է և զննել մանկանց հոգեկան աննորմալ զրութիւնները, նկատում է, որ մինչև իսկ երեխայական հասակի մէջ ալկադոլիկ պահապատները բացառիկ երեսյթներ չեն, այլ յաճախակի կրկնուղի Սովորական է դարձել կեանքի մէջ այն առածը, որ «գինի ուրախ առնէ զմարդ»—սակայն՝ ի նկատի ունենալով ալկահոլով ուրախ տրամադրութիւն դարթեցնելու տիտոր և կործանիչ հետեւանքը, իւրաքանչիւր ծնողի և դասախարակի պարտքը պիտի լինի՝ յիշել և յիշեցնել պատանիներին և երիտասարդներին մանաւանդ, որ պատամնելութիւնը—առում է Ռողենֆելդ—առանց զինու էլ երջանկութիւն է:

Գիդ. Տ. Թօվմ:

### ԿԱՆՈՆՆԵՐ ԴԱՍԱՑՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Երբէք դասարան չմտնել առանց նախապատրաստելու:
2. Նախապատրաստելիս պարզ պէտք է լինի՝ թէ ինչ պէտք է կրկնել ամենից առաջ և ինչպիսի տնային աշխատանք ստուգել:
3. Ապա նայեցէք, ջոկեցէք և կարգի բերէք այն նոր նիւթը, որը դուք ի նկատի ունիք աւանդել, սովորեցնել, կամ վարժեցնել աշակերտութեան. բաժանեցէք այդ նիւթը մասերի այնպէս, որ կարելի լինի լաւ մատակարարել դասարանին:
4. Չեղեւելով ընդունած դասադրքից դուք պէտք է այնքան լաւ տիրապետէք նիւթին, որ անցնէք դասարանում՝ առանց դասադրքի օդնութեան:
5. Այն օրինակները, որ օժանդակելու և մեկնաբանելու են ձեր բացատրութիւնները կամ վարժութիւնները, ընտրեցէք տանը կամ ինքններդ կազմեցէք, սակայն այնպէս իւրացրէք, որ ազակարողանաք օդուել դասատութեան ժամանակ:
6. Եթէ ձեր նախապատրաստութիւնը վերաբերում է այնպիսի նիւթի, որը պէտք է անդիր սովորեն աշակերաները (ինչպէս օր. ընաբաններ, հաւատամբ, երգ, ուսանաւոր), այդ գէպքում ինքններդ պէտք է սովորէք այդ նիւթը անզրի նման կամ թարմացնէք ձեր յիշողութեան մէջ: Այն դասին, որ պէտք է պատասխանէ աշակերտութիւնը յիշողութեամբ, դուք էլ պէտք է հաստատ կերպով